

Հ. ՀԱՅՐԱԳԵՏՅԱՆ

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

ԱՐԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆ



491.99-8
 Հ-30

ԴԵՏՆԻՍ 1936 ՅԵՐԵՎԱՆ

Ա. Միհրանյան
 33

1005-10

36-K
21183

Հաստատված է ՀՍՍՀ Լուստողիտմանի կողմից

491.99-8

Շ-30

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԱՌՍԱԶԻՆ ԴԱՍԱՐԱՆ

ՅԵՐՐՈՐԴ ԲԱՐԵՓՈՆՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմեց՝ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1936

10 06 2013

3672

Պատ. կոմիտեի Լ. ՎՐԳՈՒՆԻ
Ցեխ. կոմիտեի Գ. ՉԵՆՑԱՆ
Նկարիչ՝ Ա.Ն. ՄԻԻՔԱՐՅԱՆ
Մտարարիչ՝ Հ. ՀԱՅՐԱԳՈՏՅԱՆ



56606-66



1. ԼԵՆԻՆ ՊԱՊԻՆ

Լենին պապին ել
Մանուկ ե յեղել
Մեզ նման պատիկ,
Ժիր ու սիրունիկ,
Բռնել ե թիթեռ,
Սիրել ծաղիկներ,
Մահնակով սղզալ,
Յերգել ու խաղալ

Բայց խաղ ու պարից,
Մահնակ, թիթեռից,
Ծաղկից առավել
Ուսումն ե սիրել

Հրատարակ. 3540, Գլավիկա 323, Գառվեր 1307, Ցիրած. 60,000

Հանձնված ե արտադրության 4 զեկա. 1935 թ.

Մտարարված ե ապիու. 15 զեկա. 1935 թ.

Գեղարարի ապարան, Յերևան. II Գնուկի 4

2. ՄՈՅՄՐՅՈՒՄ

Մեճ դասամիջոցին Յողիկն ասաց.

— Յերեսխաներ, յեկեք սոցմըցման պայմանագիր կապենք:

— Յեկեք, յեկեք, — ձայն տվին բոլորը:

— Խոստանանք տետրակները մաքուր պահել, գրքերը չպատռել, դասերից չուշանալ, չբացակայել... Տեսնենք՝ ով ե մըցման հրավիրում:

— Յես հրավիրում եմ Արփիկին. նա դասերից ուշանում ե, տետրակներն ել մաքուր չեն, — ասաց Համոն:

— Դու յել ես ուշանում, — վրա տվեց Մանիկը:

— Յես ել խոստանում եմ չուշանալ, — պատասխանեց Համոն:

Արփիկը հրավերն ընդունեց:

— Տեսնենք՝ ինչպես եք կատարելու ձեր խոստումը: Մենք ստուգելու յենք, — ասաց Յողիկը:

3. ԿԵՅՅԵ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Կեցցես, կեցցես

Հոտով սապոն,

Կեցցես փափուկ,

Յերեսսրբիչ,

Դու ատամի

Փոշի մանր

Յեվ դու, գլխի

Միրուն սանր:

Յեկեք լողանք

Վազոզ ջրում,

Տաք բաղնիսում

Ու միշտ սիրենք

Հստակ ջուրը:

Նա յե մաքրում

Կեղտն ու մուրը:

4. ԳՈ ԳՈՐԾԸ ԴՊՐՈՑՈՒՄՆ Ե

Վաղ առավոտյան Սաթիկը վազելով ներս մտավ
կոյունատեսութեան գրասենյակը:

— Ի՞նչ ես ուզում, — հարցրեց հորեղբայր
Սիմոնը:

— Մայրիկա ուղարկեց, վաղ էր փոխարեն կո-
վերը կթեմ: Նա հիվանդ է:

— Կթե՞ր, Վոչ: Ի՞նչ գնա դպրոց: Նրա փոխարեն
ուրիշին ենք ուղարկել:

— Յես կթեյ գիտեմ, հորեղբայր Սիմոն:

— Իսկ քո փոխարեն ո՞վ պիտի սովորի: Շու-
տով դպրոց գնա:

Սաթիկը դուրս յեկավ ու վազեց դպրոց:



5. ԴՊՐՈՑԻ ՃՍՄՊԱՆ

Ձմեռվա բուքին,
Սառնամանիքին
Դպրոցի ճամպան
Դժվար է, յերկար
Շատերի համար:

Չվարթ գարունքին,
Յերգին ու ծաղկին
Դպրոցի ճամպան
Կարճ է, դուրալի
Կարծես ավելի:

Իսկ ով սեր ունի
Ինձ պես ուսումի,
Դպրոցի ճամպան
Միշտ կարճ է, սիրուն,
Ձմեռ, թե գարուն:



Դեկտեմբերի 2-ին
դպրոց չգնացի.
ատամս ցավում եր:



Դեկտեմբերի 11-ին
դասից ուշացաւ.
ժամացույցը յետ
եր մնացել:



Դեկտեմբերի 17-ին
չգնացի դպրոց.
փորս ցավում եր:



Դեկտեմբերի 21-ին
ելի դպրոց չգնացի.
քույրիկիս եյի որո-
րում:

Յերեխաները ձյունից մի մեծ գործարան
շինեցին:

— Բա անունն ի՞նչ դնենք, — հարցրեց Հաս-
միկը:

— «Կարի գործարան»: Իմ մայրիկը Կարի գոր-
ծարանումն է աշխատում, — վրա տվեց Լևոնը:

— Վոչ, «Արարատ գործարան»: Իմ հայրիկն
այնտեղ է աշխատում, — ասաց Մարոն:

— Չե, «Մեղաքսի գործարան», — գոչեց Քնա-
րիկը: — Իմ քույրիկն այնտեղ է աշխատում:

— Վոչ ա՛յս, վոչ ա՛յն, — ասաց Լենիկը: — Յեկեք
անունը դնենք «Կառչուկի գործարան»: Դե, գո-
չեցեք ուռա՛:

— Ուռա՛... Միաբերան ձայն տվին յերեխա-
ները:

Նոր գործարանը բացվեց:

Լենիկը մի կտոր ածուխ վերցրեց ու գործա-
րանի վրա մեծ—մեծ տառերով գրեց.

ԿԱՌԻՉՈՒԿԻ ԳՊՐԾԱՐԱՆ

8. ՍԵՂԵՎՆԻՆ

Չմեռ եւ Բոլոր
Ծառերը տկլոր,
Տխուր անտառում
Դողում են, մըսում:
Յեղենին միայն
Կանաչով զուգված,
Կանգնել եւ ամուր
Շուրտ քամու զիմաց:



Արջն իր սուր ճանկերով
փոս է փորում, վրան ճյուղեր
դարսում, մտնում
մեջը և քուն մտնում
մինչև գարուն:



Վոզնին նույնպես փոս է
փորում, վրան տերևներ
փռում մտնում մեջը՝ կո-
լովում ու քուն մտնում:



Սկյուռը փշակում, իր բնի
մեջ, կաղին, ընկույզ ե հա-
վաքում ձմռան համար:
Քնում է, քնում, վեր կե-
նում, ուտում, ելի քնում:



Աղվեսը ցերեկը քնում է,
գիշերը վորսի դուրս գալիս:

Նապաստակը չի քնում, այս ու այն կողմն է



վազվզում, բանջարեղենի
մնացորդներով և ծառերի
կեղևներով կերակրվում:

Միջատները քուն են
մտնում մամուռների և
ծառի կեղևի մեջ:

10. ԾԱՂԻԿՆԵՐԸ

- Ո՛ւր գնացին ծաղիկները
- Սո՛ւս, բնած են հողի տակ,
- Տաք ծածկված փողջ ձմեռը
- Ձյուն ծածկոցով սպիտակ:



11. ՎԼԱԴԻՄԻՐ ԼԵՆԻՆ

Սենյակի պատից մի նկար եր կախ տված:
Վանիկը հարցրեց հորը.

- Հայրիկ, պատմիր ինձ նրա մասին:
- Իսկ զու գիտե՞ս, թե ով ե նա:
- Գիտեմ. Լենինն ե:
- Այո, Վլադիմիր Լենինն ե, մեր սիրելի,
մեր հարազատ առաջնորդ:

12. ԻԼԻՉԻ ՍՉԻԿՆԵՐԸ



Ելեկտրական
 Լույսերը վառ,
 Վոր փայլում են
 Այնպես պայծառ,
 Աչիկներն են
 Մեր Իլիչի,
 Նրանք յերբեք
 Ել չեն հանգչի:
 Նայում ե նա,
 Մեր Իլիչը,
 Մեր թանկագին
 Ուսուցիչը,
 Նայում ե նա,
 Փայտում անուշ,
 Վոր իր խոսքը
 Դարձել ե ուժ:

Իմ հայրը շոֆեր եր:

Նա Լենինին ավտոմոբիլով ման եր ածում:

Մի որ հորս խնդրեցի, վոր ինձ ել ման ածի:

— Չի կարելի, շուտով Լենինը գալու յե,—

պատասխանեց հայրս:

Քիչ հետո Լենինը դուրս

յեկավ և ուղեց ավտոմո-

բիլ նստի:

Ինձ նկատեց և հարցրեց.

— Ո՞ւմ տղան ես:


— Իմն ե,— պատասխանեց

հայրս:

— Անունդ ի՞նչ ե:

— Պետյա:

— Դե, նստիր, Պետյա, ավտոմոբիլով ման գանք:



99-90995

Ավտոմոբիլը սլացավ:


Յերբ հասանք հրապարակին, Լենինն ինձ իջեց-
 րեց և ասաց.

— Նու, Պետյա, վաղիր տուն:

Յես վազեցի տուն ու մայրիկիս ասացի.

— Մայրիկ, յես Լենինի հետ ավտոմոբիլով
 ման յեկա:

Հետո յել պատմեցի ընկերներիս:



Վլադիմիր Իլիչ Լենինը մեռավ հազար ինն հարյուր քսանչորս թվի հունվարի 21-ին, Գորկի գյուղում:

Նրան թաղեցին Մոսկվայում:

Սառնամանիք եր: Փողոցը լիքն եր մարդկանցով:

Բոլորը գնում եյին իրենց մեծ առաջնորդին: մնաս բարով ասելու:

Յերը գազադր գերեզման իջեցրին, մեր յերկրի բոլոր գործարանների և գավոզների սուլիչները սուլեցին:

Հինգ ըուպե բոլոր գնացքները, տրամվայները, հետևակները կանգ առան:

Ամեն տեղ ելեկտրականությունը հանգավ:

Հինգ ըուպե անընդհատ սուլիչները սուլում եյին:

Սպիտակ, փափուկ ձյուն ե յեկել,
Պատել փողոց ու դաշտեր.
Յեկեք, յեկեք, ջան մանուկներ,
Խաղանք ձմռան մեր խաղեր:

Ոգը մաքուր, սառն ու պայծառ,
Յեկեք խաղանք, պաղի տանք,
Վաղուց ե, վոր մենք չենք տեսել
Սյուպես սիրուն յեղանակ:

Խաղ անելով մաքուր ողում
Ուժ, յեռանդ ենք հավաքում,
Խորհուրդների յերկրի համար
Սշխատանքի պատրաստվում:

16. ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐ

— Ինժեներ եմ, ինժեներ,
Նկարում եմ պլաններ
Տեսակ-տեսակ շենքերի —
Գործարանի, տների:



— Յես ել քարտաշ եմ, քարտաշ
Քար եմ տաշում, քար անտաշ
Առողջ եմ յես և ուժեղ,
Ինձ ասում են քաջ Մուշեղ:

— Յես խաչոն եմ սվաղչի,
Գործս իսկի պակաս չի.
Սվաղում եմ, սվաղում
Տներում ու սրահում:




— Վորմնագիր եմ, վորմնագիր,
Պատ եմ շարում յես ընտիր.
Ունեմ մուրճեր, չափիչ, լար,
Յերգ եմ ասում անդադար:

— Ներկարար եմ, ներկարար,
Ինձ ասում են գիժ Գասպար.
Ունեմ ներկեր ու վրձին:
Մտիկ արեք իմ գործին:



17. ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ




Կտոր են գործում:



Գիրք են շարում:



Կահկարասի յեն պատրաստում: Տուն են շինում:



Սովորում են:



18. ՎՆԱՍՍԱՐԱՐԸ

1.

Գիշեր եր:
Հայկն ու Լենան պիտներական ժողովից տուն
եյին վերադառնում:

Փողոցները մութն էյին:

Կոլտնտեսուիթյան դոմի մոտ մի փոքրիկ լույս
փայլեց:

— Հայկ, այն ի՞նչ եր, — կամացուկ հարցրեց
Լենան:

Կրկին լույս փայլեց:


— Գոմն ուզում են այրել, — շնչաց Հայկը —
Արի յետ դառնանք, նախագահին հայտենեք:

2.

Շատ չանցած՝ նախագահը կոլտնտեսականների
հետ յեկավ: Յեկան ու գոմը շրջապատեցին:

— Կուլակ Բաղդոն ե, կուլակ Բաղդոն, — ձայն
տվեց մեկը: — Ուզում ե փախչել:

Բաղդոյին բռնեցին ու տարան դատելու:



19. ԴԵՊԻ ԳՈՐԾ

Տու-տո՛ւ, տու-տո՛ւ...

Առավոտյան ժամի յոթին
Գործարանի սուլիչն ուժգին

Յերկար հնչեց,

Բարձր կանչեց:

Ու զեռ դատարկ փողոցներով
Զլարթ ու ժիր, ուրախ զեմքով
Բանվորները շարան-շարան
Շտապ գնում են գործարան:

Բանվոր Մինասը ծերացել էր. ել չեր աշխատում. կենսաթոշակ եր ստանում:

Մի որ, յերբ ուղիոն խոսում եր, Մինասի թուր՝ պիոններ կիմն ասաց.

— Պապի, ըս գործարանի մասին են խոսում:

— Ի՞նչ են ասում, բալաս:

— Ասում են, վոր պլանը չեն կատարել:

— Վճիր ցելսը:

— Հալոցի ցելսը:

— Հալոցի՞ ցելսը:

— Այո:

Ծերունին լռեց:

Ամբողջ գիշերը նրա քունը չտարավ:

Առավոտյան վաղ Մինասը վեր կացավ ու գնաց գործարան:



Ահն, ահն:



Իսկույն կրունեմ:



Ուր գնաց...»





22. Իկվան

Հեռու հյուսիսում ե ասլում փոքրիկ Իկվան —
 եսկիմոս տղան:
 Նա դարձնեց ձյունն տանը:
 Տան մեջտեղին, մի ամանի մեջ վառվում եր
 ջնածկան ճարպը:
 Կրակը լուսավորում եր ու տաքացնում:
 Իկվան դուրս յեկավ արջի մորթուց, վորի մեջ
 քնած եր: Նա հագավ մորթե շորերը:
 Շունն ել գարձնեց և Իկվայի մոտ վազեց:
 Նրանք անից դուրս յեկան:
 Իուրսը մուխն եր ու ցուրտ:
 Ձմռանն այտեղ մի քանի ամիս շարունակ
 արեր դուրս չի գալիս, իսկ ամռանը՝ մի քանի ամիս
 մայր չի մանում:
 Այտեղ ծառեր չկան:
 — Արի, կերակուրը պատրաստ ե, — ձայն տվեց
 մայրը:
 Իկվան, նախաճաշելուց հետո, գրքերը վերցրեց և
 ուրիշ աշակերտների հետ նստեց շներ լծած սահ-
 նակը, գնաց մոտիկ գյուղի դպրոցը՝ սովորելու:

(Մուսկ)

— Էսել ես արդյոք,
 Սոնեո հարևան,
 Սրանից ել լսվ,
 Ուրախալի բան.
 Սառւմ են կատուն,
 Չար ու մկնակեր,
 Հսկա առյուծի
 Ճանկն ե ընկեր:
 Այ թե քեֆ կանենք
 Խահանոցում մենք:
 — Մի ուրախանա,
 Մկնիկ հարևան,
 Ի՞նչ առյուծ, ի՞նչ բան.
 Յեթե վոր գործը
 Ճանկերի հասնի,
 Կատվի թաթերիկ
 Վոչ վոր չի պրծնի:
 Ի՞՞՞վար թե առյուծը
 Կենդանի մկա.
 Փիտիկից ուժեղ
 Կենդանի չկա:

Մկան համար կատուն ել գազան ե



24. ՓԱԹԻՂՆԵՐԸ

Փաթիղները
 Թներ առած
 Շտապում են
 Դեպի ցած,
 Իջնում են վար
 Արագ-արագ,
 Աշխարհն առնում
 Իրենց տակ:

(Հեքիաթ)

Ձմեռն իր մաքուժը դրեց բուրբին կտորեր:
 Եւ ուզեց առաջ թռչուններին սպանել: Բայց
 թռչունները թռան, գնացին տաք յերկիրներ: Յե՛վ
 ձմեռը նրանց յետևից հասնել չկարողացավ:

Ձմեռը հարձակվեց գազանների վրա: Չյուճով
 ծածկեց գաշներն ու անտառները, իրար յետևից
 սառնամանիքներ ուղարկեց: Բայց գազանները
 չվախեցան: Վումանք տաք մուշտակներ եյին հագել,
 մյուսները մտան իրենց խոր բները:

Ավելի բարկացավ ձմեռը: Բարկու թյունը թա-
 փեց ձկների վրա: Իրար յետևից յեկան սառնա-
 մանիքները, գետերի ու լճերի վրա կամուրջներ կա-
 պեցին: Գետերն ու լճերը սառան, բայց վերելից:
 Չկները մտան ջրերի խորքը: Այնտեղ տաք եր:

Ձմեռը կատաղեց:
 Մեկը մյուսից սարսա-
 փելի սառնամանիքներ
 ուղարկեց:



Մարդիկ վառեցին իրենց
 վառարանները: Նստեցին
 տաք աներում և սկսեցին
 ձմռան վրա ծիծաղել:
 Յերեխաներն ել չվախե-
 ցան նշանից:

Տաք շորեր հագան, վերց-
 րին իրենց սահնակները, սղզանները, դահուկները
 և դուրս յեկան փողոց:

Տեսեք, տեսեք՝
 Ջյուն ե գալիս
 Փաթիլ-փաթիլ,
 Սպիտակ,
 Ծան ու ծաղիկ,
 Փողոց ու տուն
 Վաղ առել ե
 Իրա տակ:
 Ջան, շան ձմեռ,
 Հազար բարով,
 Ինչ ուրախ ենք
 Մենք այսօր,
 Ձնե տներ
 Յե՛վ ձնե մարդ
 Մենք կշինենք
 Ամեն ոք:



ՄԱՐՇԱԼ ՎՈՐՈՇԻԼՈՎ

Ահնադրելի Կարմիր բանակի
 հերոս առաջնորդ

27. ԱՆՀԱՂԹ ԲԱՆԱԿԸ

Կարմիր բանակը,
 Անհաղթ բանակը,
 Մեր Խորհուրդների
 Արթուն պահակը,
 Չգաստ և անբուն
 Գիշեր ու ցերեկ



Դիտում ե, հսկում,
Վոր մեր թշնամին
Մոտ չգա յերբեր
Խորհրդի յերկրին:

Ուռն, ուռն մեր
Կարմիր բանակին՝
Բանվոր, գյուղացու
Սըթուն զավակին:

Քեռի Ստեփանը կուտնտեսության սերմի պահեստի պահակն եր:

Կուլակները մտածեցին խանգարել կուտնտեսության զարնանացանը:

Վորտեցին սերմը գողանան:

Ինչ անեն, վոր քեռի Ստեփանը հեռանա պահեստից:

Կուլակները զնացին քեռի Ստեփանի տունը կրակ տվին:

Ամբողջ գյուղն իրար անցավ:

— Ստեփան քեռի, տունդ այրվում ե, վաղիր, —
ասում էին գյուղացիք:

Բայց Ստեփան քեռին տեղից չջարժեց: Թշնամիները սխալվել էին:


Քեռի Ստեփանի տունն այրվեց, բայց կուտընտեսության սերմն անփասս մնաց:

Կուտնտեսությունը քեռի Ստեփանի համար նոր տուն կառուցեց:

29. ԻՆՉ ԹՈՉՈՒՆ Ե


Մի թռչուն կա պատրիկ,
 Մարմին ունի կտրիկ,
 Կտուցը կարճ ու հաստրիկ,
 Ճկճում ե սիրունիկ:

ԶՎՈՂ ԹՈՉՈՒՆՆԵՐ




Միծեանակ Մարյակ Արագիւ

ԶՄԵՌՈՂ ԹՈՉՈՒՆՆԵՐ



Ճնճգուկ Ագռավ Կաչաղակ



30. ԳԱԶԱՆԱՆՈՑՈՒՄ

Մեր խումբը, ուսուցչուհի ընկ. Հասմիկի ղեկավարութեամբ, գնաց գաղանախոյ: Գաղանախոյը գտնվում եր բանվորական ապարտի բակում:

Մուտքի առաջ շարված եյին կենդանիների և թռչունների նկարներ:

Ներս մտանք:

Մեծ-մեծ վանդակների մեջ կարգով շարված եյին կենդանիները:

Այնտեղ եյին՝ առյուծը, վագրը, բորենին, ջարամը, փիղը, գայլը, աղվեսը, մի քանի ահագին ոճեր, տեսակ-տեսակ կապիկներ և ուրիշ շատ կենդանիներ ու թռչուններ:

Մի մարդ պատմում եր մեզ յուրաքանչյուր կենդանու մասին, թե քանի տարեկան ե, վորտեղից ե բերված, ինչով ե կերակրվում:

Ինձ ամենից շատ դուր յեկավ կանաչ թևերով թռթակը, վոր նայում եր մեզ և շարունակ կրկնում.

Յերեխեք, յերեխեք,
 Շաքար ավեք, շաքար ավեք

31. ԿՈՒՏԷՏԵՍՈՒԹՅԱՆ ՁՄԵՌՆԵՐԸ
ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ձմռանը կողանտեսութեանը շատ աշխատանք
ունի. պետք է մեքենաները, գութանները, սայլե-
րը նորոգել, գարնան աշխատանքի համար պատ-
րաստել, սերմը գտել:

Պետք է այնպես անել, Վոր կարելի լինի
գարնանը ժամանակին սկսել գաշտային աշխա-
տանքները:


32. ՇՉՍԿԻ ՅԵՐԳԸ

Հեռու ծայրից քաղաքի
Յերգն է հնչում շշակի.
«Պատիկ սղջիկ, վեր կաց, վեր,
Վաղուց արևն է ծագել.
Հիմի արգեն դպրոցում
Վաղուց քեզ են սպասում»:

Հեռու ծայրից քաղաքի
Յերգն է հնչում շշակի.
«Մանուկներին եմ կանչում,
Մայրիկներին եմ կանչում,
Աշխատանքի յեմ կանչում»:

Քեզ հետ միասին
Մայրդ կզարթնի
Ու յերբ շշակի
Յերգելը լսի,
Կերթա, դազգյահի
Մոտը կկանգնի»:

Հեռու ծայրից քաղաքի
Յերգն է հնչում շշակի:



Մի ծերունի վորսորդ մի խոսող սարյակ ու-
նէր:

Ծերունի վորսորդի մոտ հաճախ գալիս եր
հարեանի յերեխան՝ սարյակին լսելու:

Յերբ վորսորդը հարցնում եր.

— Վորտեղ ես, սարյակիկ:

— Այստեղ եմ, պապիկ, — պատասխանում եր
սարյակը:

Մի անգամ ել տղան յեկավ, բայց վորսորդը
տանը չեր:

Յերեխան մտածեց տանել թռչունը: Բռնեց և
գրպանը գրեց:

Հենց այդ ժամանակ տուն մտավ վորսորդը և
հարցրեց.

— Վորտեղ ես, սարյակիկ:

— Այստեղ եմ, պապիկ, — պատասխանեց
թռչունը յերեխայի գրպանից:

Ժամի տասն ել խիեց,
Բայց ծույլ Գոգան չզարթնեց:

Դեմքը թաղել բարձի մեջ
Խամփում ե նա անվերջ:

Տանտեկին հաղիվ հազ
Չարթնեց, շորերը հագավ,

Տեսավ փխտն թավամազ
Կաթն ե խմել բաժակի,

Իսկ շնիկը վաղեվազ

Տարել, կերել ե բուլկին:

Սոված փորով, բարկացած


Դեպի դպրոց նա գնաց,

Տեսավ ինքը ուշացել,

Պարապմունքը վերջացել,

Ընկերներն ել վաղուց

Արդեն տուն են գնացել:



35. ԲՍՂԱԲԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԸ

Տեսնենք՝ քաղաքը չի՞ մտել արդյոք գյուղացու տունը:

Ահա լամպը, մեջը նավթ — սա քաղաքից եւ Հապա ամանեղենը: Վորը մետաղից եւ, քաղաքից եւ, իսկ փայտե ամանեղենն իրենք, գյուղացիք են պատրաստում:

Մտնենք կոլանտեսուսթյան սրահը:

Ահա կացին, գերանդի, գուլթան, քամոյ մեքենա, կարսիչ մեքենա, հնձոյ մեքենա, տրակտոր: Բոլորը քաղաքից եւ Բոլորը քաղաքի բանվորներն են շինել:


Մտնենք գյուղխորհուրդը, խրճիթ — ընթերցարանը: Ամեն տեղից քաղաքը կնայի ձեզ վրա:

Ուսուցչին եւ, բժշկին եւ, գյուղատնտեսին եւ քաղաքն եւ ուղարկելու նրանք բոլորն եւ քաղաքումն են ունում առել:

Քաղաքում տպվում են թերթեր, ամսագրեր, զրբեր:

Դրանցից մենք խմանում ենք, թե ինչ եւ կատարվում մեր յերկրում, ինչպես են ապրում մարդիկ ուրիշ յերկրներում:


—



36. ՄԱՐՏԸ

Ա՛խ, եսպէս ել գիժ ամիս.
 Մարդու հանգիստ չի տալիս:
 Եսոր ուրախ որ կանի,
 Վաղը՝ անձրև ու քամի,
 Առավոտը՝ պայծառ ող,
 Կեսորը մութ ու ամպոտ:
 Մին հագնում ե սպիտակ,
 Մին կանաչին ե տալիս,
 Մի որ ցուրտ ե, մի որ տաք,
 Մին խնդում ե, մին լալիս...
 Ա՛խ, եսպէս ել գիժ ամիս

Ե՛յ, կանաչ ախպեր,
 Ե՛յ, ճաճանչ ախպեր,
 Արի, քեզ հետ քեր
 Արևի շողեր,
 Բեր անուշահոտ
 Ծիլ, ծաղիկ ու խոտ,
 Կարկաչուն վտակ,
 Յերկիրնք կապուտակ,
 Սատուտիկ հավքեր,
 Զքնգան յերգեր,
 Գառների մայուն,
 Սաղ, ուրախություն...
 Ե՛յ, կանաչ ախպեր,
 Ե՛յ, ճաճանչ ախպեր



38. ՍՍՐՅԱԿԻ ՏՈՒՆԸ

Մարյակները մեր հերթան
 Ես ուր վոր ե պիտի գան,
 Բայց տնակը հնացած
 Պետք չի գալու ել նրանց:

Կարեն, արի միասին
 Նոր տուն շինենք սարյակին,
 Թե չե՛ տեսնի տուն չկա,
 Ել մեր բակին մոտ չի գա:

Վորդ ու թրթուր գանազան,
 Յես Ի՛նչ գիտեմ՝ ել ինչ բան,
 Ներս կմտնեն մեր այգին,
 Վնաս կտան ահագին:

Իե, վեր գնա մուրճը բեր,
 Յես ել՝ աախտակ ու մեխեր:

Մի անգամ գարնանն Աշոտն ու Տիգրանն ու-
 ռենու ճյուղերից իրենց համար փայտեր կտրեցին:



Յերբ առվի ափին
 նստած խոսում եյին,
 Տիգրանն իր փայտը
 կտրեց ու զեն գցեց,
 Իսկ Աշոտը տնկեց
 առվի ափին՝ խոնավ
 գետնի մեջ:

Անցավ մի քանի
 ամիս:


Մի որ Տիգրանը,
 առվի ափը գալով, տեսավ, վոր Աշոտի տնկած
 փայտը կանաչել, ճյուղեր ե տվեր:

Շատ տարիներ անցան:
 Աշոտն ու Տիգրանը մի անգամ միասին յեկան
 առվի ափը:

Այդտեղ Աշոտը նկատեցմի
 սիրուն ուռենի և ասաց.
 — Նստենք այս ուռե-
 նու տակ:

— Նստենք: Յես հաճախ
 մենակ նստում եմ այս
 ուռենու տակ և քեզ հի-
 շում, — պատասխանեց Տիգ-
 րանը:

— Ինչո՞ւ:
 — Հիշում ես, վոր քո
 ձեռնափայտը տնկեցիր
 առվի ափին: Այս ուռենին
 այն փայտն ե, վոր աճել և և այսպիսի սիրուն
 ծառ դարձեր:





40. ԾԱՌԱՏՈՒՆԿ

Փոս ենք փորում,
 Ծառ ենք տնկում
 Ուրախ յերգով ու կանչով,
 Վոր մեծանա
 Ու ճյուղեր տա,
 Ծածկվի սիրուն կանաչով:
 Ու յերբ ամռան
 Արևը գա
 Իր շոգերով շոգշողուն,
 Ծառը սիրով
 Հանգիստ կտա
 Մեզ իր անուշ ստվերում:


ԻՐՆՉ ԵՆՔ ստանում,
 Յերբ ծառ ենք տնկում.
 Մի հսկա անտառ,
 Ուր կան անհամար
 Մողես ու բզեզ,
 Կաշադակ, ազուս,
 Գայլեր ու ազվես:
 ԻՐՆՉ ԵՆՔ ստանում,
 Յերբ ծառ ենք տնկում.
 Դուռ ու պատուհան,
 Սեղան, նստարան,
 Քանոն, գրչակոթ,
 Սայլեր ու անիվ,
 Ծաղկի անուշ հոտ:
 ԻՐՆՉ ԵՆՔ ստանում,
 Յերբ ծառ ենք տնկում.
 Մեծ ուղի-սյուներ,
 Վոր բունենք ձայներ,
 Գերան անհամար,
 Յերկաթգծերի,
 Կամ բջի համար:



40. ԾԱՌԱՍՏՈՒՆԷ

Փօս ենք փորում,
 Ծառ ենք տնկում
 Ուրախ յերգով ու կանչով,
 Վոր մեծանա
 Ու ճյուղեր տա,
 Ծածկվի սիրուն կանաչով:
 Ու յերբ ամռան
 Արևը գա
 Իր շողերով շողշողուն,
 Ծառը սիրով
 Հանգիստ կտա
 Մեզ իր անուշ սափերում:

Ի՞նչ ենք ստանում,
 Յերբ ծառ ենք տնկում.
 Մի հսկա անտառ,
 Ուր կան անհամար
 Մողես ու բզեզ,
 Կաշաղակ, ազոավ,
 Գայլեր ու աղվես
 Ի՞նչ ենք ստանում,
 Յերբ ծառ ենք տնկում.
 Դուռ ու պատուհան,
 Սեղան, նստարան,
 Քանոն, գրչակոթ,
 Սայլեր ու անիվ,
 Ծաղկի անուշ հոտ:
 Ի՞նչ ենք ստանում,
 Յերբ ծառ ենք տնկում.
 Մեծ ռազիո-սյուներ,
 Վոր բունենք ձայներ,
 Գերան անհամար,
 Յերկաթգծերի,
 Կամ ըջի համար:



42. «ԱՌԱՋԻՆ ԱԿՈՍԻ ՏՈՆԸ»

«Կարմիր Աստղ» կոչանտեսուժյունը կատարում էր «Առաջին ակոսի տոնը».

Լայն զարգացից դուրս յեկավ տրակտորը
Տրակտորը փնջում էր, ճշում և իր յետևից
վեց գութան քաշ ապիս:

Տրակտորի վրա փակցված էին հետևյալ լողունակները:

ԱՇԽԱՏԵՑԵՔ ՄԵԻՆԱՆԵՐՈՎ:

ԶԳԱՎՈՐ ՈՒ ՄԻՋԱԿ ԴՅՈՒՂԱՑԻՆԵՐ, ԿՈՒԽՈՋ
ՄՏԵՔ, ԿՈՂԵԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԵՐԲԸ
ԲԱՐՉՐԱՑՆՈՒՄ Ե:

ՑԱՆԵԼՈՒ ՄԵՐՄԸ ԶՏԵՑԵՔ,
ԸՆՏԻՐ ՍԵՐՄԵՐ ՑԱՆԵՑԵՔ:

Տրակտորը դաշտ դուրս յեկավ և միանգամից
վեց ակոս բաց արեց:

43. ԳՕՐՆԱՆ ԱՑԱՆ

Գարնան մատաղ,
Վառ արևից
Մռայլ ու ցուրտ
Որերն անցան
Յեվ սկսվեց
Հանդ ու զաշտում,
Բոլբիկյան
Գարնանացան:

44. ԳԱՐՈՒՆ

Ձմեռն անցավ,
Յեկավ զարուն,
Զյունը հալվեց,
Լցվեց առուն:
Արև ծագեց
Արևելքից,
Ծիլեր քաշեց
Գետնի տակից:
Տաք հարավից
Յեկան հավթեր,
Բուն հյուսեցին
Ընկեր-ընկեր
Ծառը պակեց,
Տվեց բողբոջ,
Աղբյուրն հանեց
Անուշ խոխոջ:

Փռվեց կահաչ
Սարի լանջին,
Բազմեց մորին
Թփի միջին:

Մառը թավիչ
Զգեստ հագավ:
Նստեց քարին,
Յերգեց կաքավ:

Արոտ գնաց
Մնած մաքին,
Տվեց անուշ
Կաթը ձագին:

45. ՁՆԾԱՂԻԿ

Մառը ձյունի սառը գրկում
Մի ծաղիկ է ծլում, ծաղկում.
Թերը քնքուշ, թերն սպիտակ,
Աչիկները բաց-կապուտակ:

46. ՅԵՐԲ Ե ԼԻՆՈՒՄ

Ձյունն է հալչում,
Խոտը կանաչում,
Ծաղիկը ծաղկում,
Որը յերկարում:
Այս յերբ է լինում:

Փոքրիկ Պետիկը գառներ եր արածացնում:
Մի անգամ նա ուզեց խաբել կոլտնտեսական-
ներին:

— Դձյլը, գձյլը՝ Ոգնեցեք, — բացականչեց նա:
Կոլտնտեսականները յեկան և իմացան վոր
Պետիկն իրենց խաբել ե:

Մի անգամ ել իսկապես գայլը հարձակվեց
գառների վրա:

Պետիկը գուռաց.

— Ոգնեցեք, ոգնեցեք, գձյլը, գձյլը...

Կոլտնտեսականները կարծեցին, թե Պետիկը
խաբում ե ու չեկան ոգնության:

Յեվ գայլը շատ գառներ խեղդեց:

Կապույտ գլխով, կանաչ վոտով
Յես ծաղիկ եմ անուշ հոտով:
Թեև տունկա փոքրիկ ե, ցած,
Արոտներում միշտ թաք կացած,
Բայց իմ փունջը, իբրև լավ գարդ,
Տեսնում ե միշտ ամեն մի մարդ:
Յես եմ սիրուն գարնան գուշակ,
Իմ անունն ե մանուշակ:



49. ԱՐԱԳԻԼ

Արագիլ, բարով յեկար,
Հնչ, արագիլ, բարով յեկար,
Դու մեզ զարնան նշան բերիր
Մեր սրտերն ուրախ արիր:

Արագիլ, յերբ գնացիր,
Դու մեզանից յերբ գնացիր,
Հն փշեցին բուք ու բորան,
Ծիլ ու ծաղիկ ամեն տարան:

Արագիլ, բարով յեկար,
Հնչ, արագիլ, բարով յեկար,
Բունըդ շինիր գու մեր ծառին,
Մեզ մոտ մնա ամբողջ տարին:



50. ՄԱՅԻՍ

Այ ու արվան վառ մայիս,
Դու ամենից լավ ամիս.
Կյանք ու արև ես տալիս.
Ի՞նչ սիրուն ես, Հան մայիս:

Հանդ ու այգի զարդարուն,
Հովի ե խաղում գաշտերում,
Թռչուններն ել բեզ գովում.
Ի՞նչ նախշուն ես, լավ մայիս:

Դու կայտառ ես մանկան պես,
Թովուն ու խնդերես.
Յերբ կլինի, փոր բերես
Վողջ աշխարհին Այ-Մայիս:



Ստալինը 14 օտարեկան հասակում

51. ԻՌՍԻՑ ՍՏԱԼԻՆ

Ո՞վ չի ճանաչում ընկ. Ստալինին՝
 Ամբողջ յերկիրը ճանաչում է նրան։
 Ստալինին ճանաչում է ամբողջ աշխարհը։
 Ստալինը վրացի բանվորի տղա յե։ Եատ ջահել
 հասակից նա սկսել է պայքարել բանվորական
 գործի համար։
 Նա Լենինի հետ շատ է աշխատել։


Մեր Խորհրդային Յերկրի բարեկամները վողջ
 աշխարհի բանվորներն են։

Ստալինն ամբողջ աշխարհի բանվորների, գյու-
 դացիների և բոլոր յերկրների ճնշվածների առաջ-
 նորդն ու բարեկամն է։




Ամեն տեղից նրան վողջույններ են ուղար-
 կում։

Մենք ել, դպրոցականներս, ուղարկում ենք
 նրան մեր մանկական վողջույնները։



52. ՆՈՐ ՏՈՒՆԸ

Տես ինչ տուն ե,
Ինչ մեծ տուն,
Ծայրն ամպին
Ե հասնում:
Ունի անթիվ
Պատուհան,
Մանկապարտեզ,
Ճաշարան,
Կարմիր անկյուն
Ընդարձակ,
Լայն սանդուխքներ
Հարկից հարկ...
Տես ինչ տուն ե,
Ինչ մեծ տուն,
Ծայրն ամպին
Ե հասնում:



53. ՓԵԹԱԿՈՒՄ

Կյանքն ե յետում փեթակում,
Սշխատում են ու յերգում
Հազար-հազար ժրաջան
Սշխատավոր մեղուներ:

Վումանք փեթակն են մաքրում,
Սղրն ու կեղտը դուրս տանում,
Վումանք հպարտ ու կամաց
Պատրաստում են մեղրահաց:



54. ՄԵՂՈՒ

Գզզան, պզզան, պզպզան,
Փոքրիկ մեղու ազազան,
Դաշտ ու հովիտ կըրջես,
Բարձր սարեր կթռչես
Ու վտաններով թափամազ
Փոշի առած տուն կզաս:



55. ՄԵՂՈՒՆԵՐԸ

Դարունը յեկափ՝ Արևը փախցրեց դաշտերի
ձյունը՝ Որը տաք եր, արևը՝ վառ:

Մեղուները փեթակից դուրս յեկան, թռան
խնձորենու մոտ:

— Մի՛թե խնձորենին խեղճ մեղուններիս համար
վոչինչ չունի. չե՛ վոր մենք ամբողջ ձմեռը քաղ-
ցած ենք յեղեր:

— Վնչ, մեղուները շուտ են դուրս յեկել. դեռ
խնձորենու ծաղիկները թագնված են բողբոջներին
մեջ:

Մեղուները թռան դեպի բալենին:

— Մի՛թե բալե-
նին ծաղիկներ չունի
խեղճ մեղուներին հա-
մար:

— Մի քանի որից
ե՛տտ յեկեք. դեռ վնչ
մի ծաղիկ չի բացվել:



Մեղուները թռան կակաչի մոտ: Մտան նրա
գունավոր բաժակը, բայց այնտեղ ուտելիք չկար:

Մեղուները սոված, տխուր ուղում եյին յետ
դառնալ փեթակը, յերբ հանկարծ թփի տակ տե-
սան փոքրիկ, մուգ-կապույտ ծաղիկներ:

Իրանք մանուշակներն եյին:

Մեղուները նրանց բաժակներից կուշտ կերան,
խմեցին և ուրախ-ուրախ վերադարձան փեթակը:



56. ԱՐԱԳԻԼՆ ՈՒ ԳՈՐՏԸ

Ղորդ, դորդ, զորդ,
Ճլկթում յերկու գարսո
Յոփ, ցոփ, ցոփ,
Յերկարավից արագիւր
Մեկին՝ հոփ:

Կըտ,—կացովը
Գցեց ծովը,
Հորը, հորը՝
Իր մեծ փորը:

57. ԳՍՐՆԱՆ ՍՄԻՄՆԵՐԸ


Մարտը տալիս ե ճնծաղիկ,
Սպրիւր՝ կապույտ մանուշակ,
Մայիսին բացվում ե վարդը,
Սոխակը յերգում անուշակ:




58. ՍԱՎԱՌՆԱԿԸ

Ռոռոռ՝
Ձայն ե գալիս...
Սհահ, ահահ վերի կողմից
Թևերը լայն
Բացած, պարզած,
Հսկա, հպարտ ու անվրդով
Սալառնակն ե սահում ողով...
Թռչունները նրա ահից
Լեղապատառ ցած են գալիս,
Իսկ նա հպարտ ու անվրդով
Սալառնում ե կապույտ ողով...

Այս վտար յերկար ե.
վերցնեմ՝
բիչ սղոցեմ:



Հիմա վերցնեմ
այս վտար սղոցեմ:



Հիմա յեւ այս վտար...



Այս... Ի՞նչ...
Սխալվեցի մի բիչ...

Առաջ մտածիր,
հետո գործ արա:



60. ՎՈՋԵՐԸ

Մեր պարտիզի թփերում
Մի մեծ վոզնի յե ապրում:
Լուսով մինչև մութ գիշեր,
Յից անելով իբ վշեր,
Գունգ ու կծիկ ե գառնում
Ու թփերում մտնում քուն,
Իսկ գիշերը վազվզում,
Ճանճ ու մեղեղ ե վորսում:

— Ի՞նչ տգեղ ու ծակծկող շորեր ունես, բարեկամ, — ասաց նապաստակը փոզնուն:

— Ճիշտ ե, — սլառասխանեց փոզնին, — բայց իմ փշերն ինձ ազատում են շների ու գայլերի ստամաներից: Քո մորթին ել քեզ ազատում ե:

— Վհչ: Ինձ ազատում են իմ արագավազ վոաները, — սլառասխանեց նապաստակը:




Չորս յեղբայր ենք,

Մի զլխարկ,

Ու բոլորս ել

Նրա տակ:




Սևուկ շունը կծկված՝

Դռան վրա յե նստած:

Վոչ հաջում ե, փոչ կծում,


Վոչ ել մարդ ե ներս թողնում:



Մեծ սփռոցն սպիտակ

Աշխարհն առավ իրա տակ:





ՈՉԸ

— Թե վոր յես պոչ չունենամ,
Հապա ինչպե՞ս կսողամ.
Պոչը վոտ ե ինձ համար,
Արագավաղ ու հարմար



ՉՈՒԿԸ

— Պոչն ինձ համար ղեկ ե, ղեկ.
Առանց նրան, յերեխեք,
Յես վհնց լող տամ ջրերում.
Ջուրն ինձ ծռում ե, ծռում:

— Յերբ վոր կեղև եմ փորում
Պոչս ծառին եմ հենում:
Պոչն ինձ համար աննման
Հենարան ե, հենարան:



Փոքրիկ Արտաշեսը շվշվացներով գնում էր ձորով:

Հանկարծ լսեց, վոր մի ուրիշն էլ է շվացնում:

Հենց իմացա՛մ ընկերն է, կանգնեց ձայն տվեց.

— Վահան, դ՞ու յես:

— Յես...



— Մեր հորթն ուր գնաց, տեսա՞ր:

— Սա՛ր...


— Հանա՞ք ես անում, ը՛նչ ե:

— Չե՛...

— Վա՛յ, եդ հո գելը կուտի՛:

— Ուտի՛...

Արտաշեսը լալով վազեց առևն, տեսա՛մ հորթն էլ է տանը, Վահանն էլ:



65. ՓՈՔՐԻԿ ՉԿՆՈՐԱԸ

Մեր փոքրիկ Սոսը,

Ճարպիկ ձկնորսը,

Նստել է ահա

Մի քարի վրա

Ու ձուկ է վորսում,

Իսկի չի խոսում:

Ու մին էլ հանկարծ

Խցանը դողաց:

Ճչաց մեր Սոսը

Ու կարթը քաշեց,

Խայտացող ձկան

Ջրիցը հանեց:

Մի ժամանակ ես ձորերում
 Հովվի սրինգն եր շնզնգում,
 Հիմա թնդուն գուգոկն ե
 Այս վայրերի մեջ գրնգում:

Մի ժամանակ ես սարերին
 Սոխած գայլերն եյին փոռնում,
 Հիմա նրանց ծմակներին
 Հազարաչյա լույս ե վառվում:

—

Անդրեյն ու Ահմեդն իրար չեն ճանաչում:
 Անդրեյն ապրում ե Մոսկվայում: Նա աշխա-
 տում ե տեքստիլ գործարանում:
 Իսկ Ահմեդն ապրում ե հեռու — հեռու Թուրք-
 մենստանում:

Նա աշխատում ե բամբակի դաշտում — բամ-
 բակ ե մշակում:

Ահմեդն ու Անդրեյն ապրում են Խորհրդային
 Միության զանազան տեղերում, խոսում են զա-
 նազան լեզվով:

Նրանք իրարից հեռու յեն ապրում, բայց մի-
 ևնույն գործն են կատարում — չիթ են պատրաս-
 տում:

Ահմեդը կորտնտեսության մեջ բամբակ ե մը-
 շակում, Անդրեյն ել Մոսկվայի գործարանում բամ-
 բակից չիթ ե գործում:

—

Մեր կոյսողի
 Հայն գաշտում
 Շառ բամբակ են
 Հավաքում:

Այդ բամբակը
 Կրկնեն
 Բարդանները
 Ահագին
 Ու կտանեն
 Կայարան,
 Կտան մեկնող
 Գնացքին:
 Շոգեշարժը
 Աւ, հա ու, —
 Այսինքն թե՛
 Ճամպա տուր, —
 Կանցնի գաշտեր
 Անսահման,
 Կհասնի
 Կենինական
 Ավտոները
 Տեքստիլի
 Շտապ կզան
 Կայարան,
 Բարդանները
 Բամբակի
 Կտոներն, կերթան
 Կործարան:



Սմառը, բամբակի գաշտերում հասնում է
 բամբակը:

Բամբակը շանաքում են, միջի սերմերը հանում
 և ուղարկում գործարան:

Գործարանում բամբակից թել են մանում:
 Ապա այդ թելից տեսակ-տեսակ կտորներ գործում,
 հետո ներկում են ու պատրաստի կտորն
 ուղարկում կոոպերատիվ:

Շատ ու շատ մարդ է աշխատում, մինչև վոր
 պիտները կարմիր վզկապ կապի:

Ջին, Ղին, Ղին, Ղին,
 Ես քանի՞ Ղին,
 Ես տան մի՞ Ղին:
 Մի մեքենա,

Մի աժգահա՛
 Դունչը ծռած,
 Բերանը բաց:

Կլանում ե իր բերանով
 Են բամբակը հնդով, կեղտով,
 Կլանում ե, վերև տանում,
 Հունգ ու կեղտից մաքրում, գտում,

Յե՛վ մաքրում ե բամբակն արագ,
 Վոր թել մանեն հաստ ու բարակ,
 Թելեր մանեն չթի համար,
 Հնդից Ղինեն քուսպ ու ոճառ:

Ինչքան նոր շենք,
 Նոր հիմնարկներ,
 Նոր գործարան
 Յե՛վ աղումբ կան.
 Ել հինը չի,
 Հին Գյումրին չի՛
 Նոր քաղաք ե—
 Լենինական:
 Գիշեր, ցերեկ
 Մանարանում
 Հաստ ու բարակ
 Թել են մանում,
 Յե՛վ գործում են
 Տարին բոլոր
 Տեսակ — տեսակ
 Գուլպա, կտոր:

72. ԵՆԻԿՈՒ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆ

Վահանն ու Սողոմոնն աշխատում եյին միև
նույն կոլտնտեսութեան մեջ:

Վահանն ամբողջ որն աշխատում եր:

Իսկ Սողոմոնը դաշտ եր դուրս գալիս, մի կեռ
ժամ աշխատում, հետո նստում հանգստանում:

Հաճախ ել աշխատանքի չեր գալիս:

Աշունը յեկալ:

Կոլտնտեսականներն սկսեցին հաշվել, թե ով
ինչքան ե աշխատեր:

Սողոմոնի աշխորը քիչ եր:

— Ինչո՞ւ, — բարկացալ նա:

— Իսկ դու ինչպե՞ս եյիր աշխատում, քանի՞
որ ես բացակայել, — հարցրեց Վահանը:

— Այդ քեզ չի վերաբերում:

— Մի տես, թե ինչ ե գրված քո գրքույկում:
Սողոմոնը կարդաց:

ՈՎ ՇԱՏ Ե ԱՇԽԱՏՈՒՄ, ՆԱ ՇԱՏ Ե
ՍՏԱՆՈՒՄ:

Կոլտնտեսութեան մեջ ծույլեր չպետք ե լինեն:



73. ՃԱՆՃԸ

Թշնամին ե մեր ցեղի —

Խե քաղաքի, թե գեղի:

Աղան ու կեղտը վտաններին

Տարածում ե թույն ու մահ:

Այդ աներես ճանճերին

Կոտորեցեք անխնայ:

74. ԱՄՏՈՒՏԻԿ

Արտուտիկ,

Նախշուն տոտիկ,

Իջնեն կայեր

Գողարիկ-մողարիկ,

Լնտրեն քարեր,

Ուտեն կուտիկ,

Կր ծլվլան

Կլթիկ-կլթիկ:

Պետիկն ութ տարեկան եր, բայց քաղաք չեր
տեսեր:

Մի որ հայրիկը նրան քաղաք տարավ:

Ճանապարհ ընկան յերկաթուղով:

Պետիկը պատուհանից նայում եր:

Տեսնում եր բամբակի դաշտեր, անտառ, գյու-
ղեր, նոր շենքեր, զեռեր:

Մթնով հասան քաղաք:

Գնացքից դուրս յեկան ու գնացին:

Պետիկը տեսավ չորս-հինգ հարկանի մեծ-մեծ
տներ, լայն ու մաքուր փողոցներ: Մարդիկ ել
մայթերով այս ու այն կողմն ելին շտապում:

Հանկարծ Պետիկի աչքն ընկավ ելեկտրական
ճրագներին:

— Հայրիկ, հայրիկ, նայիր. լուսիններ, լու-
սիններ, — գոչեց Պետիկը:

Հայրիկն ու Պետիկը գնացին «Քյուղացու տու-
նը» գիշերելու:

Կանչում են նրան

«Պաշկա կոմունիստ»:

Ի՞նչ անենք՝ փոքրիկ, —

Լեզվանի յե խիստ:

Նոր ե լրացրել

Տասներեք գարուն,

Կարմիր վզկապն ե

Վզին փայլվում:

Քեռու գլխարկն ե

Բաշել աչքերին,

Բայց մի նայեցեք

Նրա գործերին.

Փայտ ե կտորատւմ

Մայրիկի համար,

Նոր ու նոր բաներ

Գիտե անհամար,

Իպրոց ե գնում,

Աշխատում աշխուժ,

Խաղում, հավաքում

Նոր յեռանդ և ուժ,

Վնչ մի ժամանակ

Չի լինում տխուր,

Գիրքն ու տետրակը

Պահում ե մաքուր,

Սրած ե պահում

Ծայրը մատիտի...

Սմեն պիտներ

Նրա պես պիտի:

Իպրոցում Լենիկի կրկնակոշիկները կորան
Շատ ման յեկան, սրան հարցրին, նրան հարց-
րին, չգտան:

Տուն զատնայիս աշակերտները տեսան, վոր
իրենց ընկեր Սարգիսը մոտեցավ մի անապաս-
տան յերեսայի, կրկնակոշիկները ծոցիցը հանեց
ու տվեց նրան:

Յերեսանները շրջապատեցին անապաստան տը-
ղային ու Սարգսին:

Սարգիսը վախից լաց յեղավ ու ասաց.

— Եես չեմ վերցրել, յես չեմ վերցրել:

Յերկուսին ել տարան դպրոց:

Պարզվեց, վոր Սարգիսն անապաստան տղայի
հետ վաղուց ե ծանոթ: Մի քանի անգամ իրենց
տնից ծխախոտ, լուցիկ յե տարել, տվել նրան:

— Կուզարր պիտներներին հավաքեց և ասաց.

— Յերեսաներ, անապաստան Արամին ուղարկենք
մանկատուն իսկ Սարգսի համար յերաշխափորենք:
Ս ենք նրան կրաստիարակենք: Առատանում ես ել
այդպիսի բան չանել, Սարգիս:

Սարգիսը լաց յեղավ և գլուխը կախեց:

Զմեռն անցավ:

Սարգիսն արդեն ուղղվել եր, իսկ Արամը ման
եը գալիս կարմիր վզկապ կապած:

Ամուսն տոթին գեղջկուհին
Պիտի գնա քաղհանի:

Հո չի կարող նա իր հետ

Յերեսային ել տանի:

Իսկ մայրերը քաղաքում
Մառայում են, աշխատում:

Հո չե՞ն կարող իրենց հետ

Փոքրիկներին ել տանել:

Բայց տեսել ես հրապարակե

Ձե՛: Լսիր այն ժամանակ:

Այնտեղ, մանկանց աշխարհում,

Աշխատանքն ե տիրում:

Սմբողջ որը յերգ ու խաղ,

Մանուկները ժիր, ուրախ,

Աշխատում են միասին՝

Ուրախ ժպտալ յերեսին:



79. ԱՆՃՈՌՆԻ ՃՈՒՏԻԿԸ

1

Յերեք շաբաթ թուխսը վեր չեր կենում ձվերի վրայից: Ճասերկու բրդոտ ճուռ գուրս եյին յեկել, մնում եր միայն մի կանաչավուն ձու:

Հանկարծ թուխսը լսեց, վոր ձվի ներսից թխթխկացնում են: Սաստիկ ուրախացավ, իսկույն կտցով ձուն շարդեց ու միջից գուրս յեկավ ճուտիկը:

Սա նման չեր իր յեղբայրիկներին ու քույրիկներին: Ավելի բրդոտ եր, ավելի զեղին, վոտիկները կարճ-կարճ, գլուխը լայն, կաուցը սափակ:

«Ի՞նչ անճուռնի յե», — մտածեց մայրը:

2


Հավը հավաքեց իր ճուտիկներին և հպարտ-հպարտ կռիկալով գնաց բակը: Բուլորն արագ-արագ վազվզում եյին, միայն վերջը գուրս յեկած ճուտիկը քայլում եր ծանր և որորվելով:

Մայրը ճուտիկներին տարավ առվի ափը քշուջ անելու:

Անճուռնի ճուտիկը ջուրը տեսավ թե չե, ընկավ մեջը:

Մայրը սաստիկ ճչում եր, թները թափ տալիս, դեպի ջուրը նետվում: Ճուտիկները ձվձվում եյին, զես ու զեն ընկնում: Աքլորը ծղրտաց, հավերը կշկշացին, փքված հնգուհավն ել ամուր գուտողում եր:

Իսկ անճուռնի ճուտիկը հանգիստ լոց եր տալիս ջրի յերեսին:



Պառավ նանը, լսելով բակի աղմուկը, գուրս վազեց՝ տեսնի, թե ի՞նչ ե պատահել:

Լողացող ճուտիկին տեսնելով՝ նա գոչեց.

— Վճյ, քոռանամ յես. այս ի՞նչ եմ արել հավի տակ բազի ձու յեմ դրել:

Հայրիկս յերկու ճագար եր գներ
 Եերկու ան ել ձյունի նման սպիտակ եյին, աչ-
 քերը կարմիր, ականջները լուշ-լուշ մեկը բրդոտ,
 մյուսը՝ կարճամազ:

Մեծ ու բրդոտին անվանեցինք «Սրջ», մյուսին՝ «Ճերմակ»:

Որը յերեք անգամ կերակրում եյինք նրանց. տալիս եյինք ճակնդեղ, կաղամբ, խոտ, տերև, սխտու, գարի, չոր հաց:

Մի որ հայրիկը Ճերմակին փոխադրեց վանդակ
 — Կիտե՛ս, Փաննա, Ճերմակը շուտով ձագեր
 կունենա. նրան փոխադրում եմ վանդակ, փոր կա-
 րողանաս գիտել, թե ինչպես ե խնամելու ձագերին:

Վանդակի մեջ չոր խոտ և փայտի թեփ լցրինք:
 Մի բանի որ հետո նկատեցինք, փոր վանդակի
 ամկյուն ամ ճագարը խոտից բուն ե շինել, ներսն
 ել կարծես բամբակով պատեր:

Հայրիկից իմացա, փոր ներսի սպիտակը բուրդ
 ե Ճերմակն ատամեկրով պոկել եր իր փորի վրայից
 ու նրանով ձագերի համար անկողին հյուսեր:

Հետեյալ որը բնի վրա և բնի առաջ այնքան
 թեփ եր կուտակվել, փոր այլևս փոշինչ չեր յերևում:
 Հայրիկի ասելով Ճերմակը ծնել եր ու ձագե-
 րին թազցրել թեփի մեջ:

— Միթե մայրը նրանց չի կերակրում, — հարց-
 րի յես:

— Ճերմակը շատ զգուշ ե, — պատասխանեց
 հայրիկը, նա այնպիսի ժամանակ ե կերակրում
 ձագերին, վոր մեկնք չնկատենք:

Մի որ ել գհագի կերակրելու և ինչ տեսա...
 Վանդակում ութ սպիտակ, սիրունիկ, թրմբ-
 լիկ ճագար են նստած, վորոնցից յերեքը յեր-
 կարամազ, իսկ մնացածը՝ Ճերմակի նման:
 Ինձ տեսնելուն պես սկսեցին աջ ու ձախ
 վազվզել:

Բազուկի կտորները ներս լցրի թե չե, Ճեր-
 մակն այնպիսի ախորժակով սկսեց կրծել, վոր
 ձագերի ախորժակն ել բացվեց, նրանք ել սկսե-
 ցին կրծելու փորձեր անել:

Այդ որը յես ու հայրիկս վանդակի առաջից
 չեյինք ուզում հեռանալ: Իխում եյինք, զխում
 չեյինք կշտանում:

1.

Սմենն որ, յերեկոյան ժամի հնգին, յերբ ուղիոն սկսում եր խոսել, Համիկի մայրիկն իսկույն վերցնում եր մատիտն ու տետրակը, նստում սեղանի առաջ և գրում:

— Ի՞նչ ես անում, մայրիկ ջան, — հարցրեց մի որ Համիկը:



— Դաս եմ առնում, բալիկ, — պատասխանեց մայրիկը:

— Ի՞նչ առանց ուսուցչի վճիռի ես դաս առնում:


— Ուսուցիչը ուղիոյի կենտրոնումն ե, այնտեղից ասում ե, յես ել լսում եմ ու գրում:

— Հիմի քեզ դաս կհարցնի, հա՞, մայրիկ:

— Վո՞չ, ջանիկս. այնտեղից խոսածն ե լսվում, այստեղից խոսածն ուսուցիչը չի լսի:

2.

Մի որ ել ուղիոն սկսեց խոսել. բայց մայրիկը չկար. Համիկը դես ու զեն ընկավ, մայրիկի տետրակը վերցրեց, դրեց սեղանի վրա, բաց



արավ, վագեց մատիտն ել բերեց և նստեց սեղանի առաջ:

Հանկարծ դուռը բացվեց և ներս մտավ մայրիկը:

— Մայրիկ ջան, այդ ուր ես գնացել, ե. ախր քանի ժամանակ ե՞ ուսուցիչը դաս ե պատմում, իսկ դու չկաս, — բարկացավ Համիկը:

— Ինչո՞ւ չասացիր՝ մայրիկս տանը չի, քիչ սպասիր:

— Ա՛յ դու, — մտաբ թափ տարով ասաց Համիկը, — բա այստեղից խոսածն ուսուցիչը կլսի:

— Պայծառ ու աաք
 Յեղանակ,
 Գնանք գետը
 Լողանանք:
 Չուչիկ, զու յել
 Մեզ հետ յեկ՝
 Չափ-չափ անենք
 Ու պարենք:
 — Հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ,
 Մի մտիկ՝
 Վողջ աղերքն
 Անշապիկ:

Չարաճճի
 Չուչիկին
 Բերին՝ Չուրը
 Կցեցին:
 Վսնց ե թրջվել
 Չուչիկը՝
 Վեր ե գցել
 Ինչիկը:



83. ՀԵՌՍԵՈՍԸ

Տանը մարդ չկար. միայն Աշոտն եր մնացեր
 Մի քիչ գնդակ խաղաց, մի քիչ շախմատ, գրք-
 քերին նայեց և այն ե՛ ուղում եր գնալ բակը, յերբ
 հեռախոսը ծնգծնգաց:

Աշոտն ուրախացավ: Մի աթոռ քաշեց, բարձ-
 րացավ աթոռի վրա, հեռախոսի խողովակը վերցրեց
 և դրեց ականջին:

Չայն չկար:

— Կենտրոն... Կենտրոնն ե:

— Այո, - լավեց խողովակի միջից:

— Տվեք, խնդրեմ, 16:

— Պատրաստ ե, - լավեց խողովակի միջից:

— Ո՞վ ե խոսում, - հարցրեց մեկը:

— Յես եմ, մորաքույր, Աշոտը:

— Ի՞նչ կա, Աշոտ ջան: Լավ ես:

— Լավ եմ, մորաքույր: Ինչ ինչպես ես:

— Լավ եմ, — ծիծաղեց մորաքույրը
— Մորաքույր, այսօր ճաշին համեցեք մեզ
մոտ: Անիկն ել գա, Նիննելն ել, դու յեւ... Միայն
թե չուշանաք...
Ասաց ու խողովակը կախ տվեց:

Փամի յերեքին մորաքույր Մարոն, Անիկն ու
Նիննելը յեկան:

— Այս ինչպե՞ս յեղավ, վոր մեզ հիշեցիք, —
հարցրեց Աշոտի մայրիկը:

— Ճաշի հրավիրեցիք, մենք ել յեկանք, — պա-
տասխանեց մորաքույրը:

Մայրիկը դարձացավ:

— Յես եմ հրավիրել, մայրիկ շան, յես, — գո-
չեց Աշոտը: — Հեռախոսով հրավիրեցի:

Միշիկն ապրում եր գյուղում:

Մի որ, յերբ նա դպրոցից վերադարձավ, հան-
կարձ դուռը բացվեց և ներս մտավ փոստատարը:

— Միշիկ Մինասյանն այստե՞ղ ե ապրում:

— Յես եմ, — գոչեց Միշիկը:

— Ելի՞ ում ապակին ես կտորել, չարաճճի, —
բացականչեց տատիկը:

— Ի՞նչ ապակի, — դարձացավ փոստատարը: —

Յես նրա համար «Հոկտեմբերիկ» եմ բերել:

Փոստատարը գնաց:

Միշիկը «Հոկտեմբերիկը» վերցրեց և սկսեց
նկարները նայել և կարգար:

— Հայրիկ, ինձ Յերևանում ճանաչում են:

— Ինչպե՞ս չե, — ծիծաղեց հայրը:

— Հապա ինչպե՞ս են իմ հասցեն իմացել:

— Վորևե մեկը քո հասցեն տված կլինի, թե
չե փոստը չեր բերի:

— Մի՞թե փոստն ե բերու մ: Չե՞ վոր նամակա-
տարը վոտով յեկավ:

— Փոստը յերկաթուղով են բերել:

— Բա յերկաթուղին ինձ ճանաչում ե:

— Յերկաթուղին ել չի ճանաչում: Գրքի վրա
քո հասցեն գրել են, հանձնել փոստին: Փոստն ել

հանձնել ե յերկաթուղուն, յերկաթուղին ել բերել ե:

Յերկու որից հետո Միշիկն իր կարմիր բանա-
կային քեռուց նամակ ստացավ:

Քեռին գրել եր, վոր «Հոկտեմբերիկ» ե ու-
ղարկել:

85. ԱՄՌԱՆ ԱՄԻՄՆԵՐԸ

Հունիսք մեզ խոտ ե տալիս,
Բսկ հուլիսն առատ ցորեն,
Ոգոստոսը տանձ ու խնձոր
Սեպ ուրիշ շատ հասուն մրգեր


86. ՅԵՐՐԲ Ե ԼԻՆՈՒԾ

Արեն ե այրում,
Սուտը չորանում,
Ցորենը հասնում,
Հասկերը լցնում:
Այս յերբ ե փնում:

87. ՉՈՐՍ ՅԵՂԱՆԱԿ

1.

Յես բերում եմ պայծառ արև ու տաք որեր:
Յես ծածկում եմ գաշտերը դալար խոտերով ու
զարգարում անտառների կանաչ սերկնեղով: Յես
բերում եմ ծաղիկներ ու յիշեցնեմ, կոնչում եմ
թռչուններին հեռու յերկրներից և աշխարհը լեց-
նում յերգերով:
Մթթե ինձ չեք սիրում:



2,


Յես վոսկեզոծում եմ արտերը և կոացնում հասկերի զլուխները: Յես կախ եմ անում այգիներում տանձ, խնձոր, զեղձ ու խաղող: Յես ճուտիկներին թուցնում եմ բներից և հանում մանուկներին զով անտառը, աղբյուրների մոտ, ազատ սարերը:

Մի՛թե ինձ չեք սիրում:



Յես գուշն-գուշն ներկում եմ ծառերը և ճամպա յեմ գնում խոչուններին զեպի առք յերկրները: Յես լցնում եմ մառանները մրգերի կախաններով, չիր ու չամչով: Յես բաց եմ անում ձեզ համար դպրոցի դռները:

Մի՛թե ինձ չեք սիրում:



Յես խաղացնում եմ ձյունի փաթիլներն Իդի մեջ և ծածկում եմ սար ու ձոր սպիտակ փերմակով: Յես կապում եմ գետերն ամուր սառուցով: Յես բերում եմ ձեզ համար ձնազնդի, սահնակ ու սղան:

Մի՛թե ինձ չեք սիրում:

Ամբողջ տարվա ընթացքում
 Զւնիս վոչ մի ուշացում:
 Հարվածա լին եմ, գհանք:
 Իսնձ պատլիկ չկարծեք:

Բրիգադիր եմ, բրիգադիր,
 Գործերիս միշտ ուշադիր:

Դասի ժամին լուռ լսում,
 Ապա խաղում, վազվզում,
 Աշխատում եմ հյուսմ ողում
 Յե՛վ միշտ տանում սոցմ ըցում:

Բրիգադիր եմ, բրիգադիր,
 Գործերիս միշտ ուշադիր:



ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ

	ԵԶ
1. Լենին պաղին	5
2. Սոցմըցում	6
3. Կեցցե մաքրությունը, Ա.Բ. ԵՆԿՈՑԱՆ	7
4. Քս գործը դպրոցումն է	8
5. Գործոցի ձամպան, «ԼՈՒՍԱՑԵՐ»	9
6. Մու չի որագիրը	10
7. Ձյունե գործարանը	11
8. Ցեղանին	12
9. Ինչպես են անդկացնում ձմեռը	13
10. Մադիկները, ՀՈՒԼԸ. ԹՈՒՄԱՆՑԱՆ	14
11. Վազիմիր Լենին, Ն. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ	15
12. Իլիչի աշիկները	16
13. Լենինի հետ	17
14. Հոսնվարի 21-ին	18
15. Մաքուր ողում	19
16. Կառուցողներ	20
17. Աշխատում են	21
18. Վասարարը	22
19. Դեպի գործ	23
20. Մեր բանվորը	24
21. Ո՞ւր գնաց	25
22. Իկվան	26
23. Մուկն ու անհեռը	27
24. Փաթիլները	28
25. Ինչ արավ ձմեռը	29
26. Ձմաան յիրգ, ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՑԱՆ	30
27. Անհաղթ բանակը	31

28. Քեռի Ստեփանը	33
29. Ի՞նչ թոչուն է	34
30. Կազանանոցում	35
31. Կոլանո. ձմեռային աշխատանքը	36
32. Շչակի յերգը	37
33. Սուսոյ սարյակը	38
34. Ծուլլ Գոգան	39
35. Բաղաքը և դյուղը	40
36. Մարտը, ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ	41
37. Կանաչ ախոյիւր, ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ	42
38. Սարյակի տունը	43
39. Աշոտի ձեռնափայտը, «ԼՈՒՍԱՐՁԱԿ»	44
40. Ծառատունկ	45
41. Ինչ ենք ստանում	46
42. «Առաջին ահոսի տոնը»	47
43. Կարնանցան	49
44. Գարուն, Ա.Թ. ԽՆԿՈՅԱՆ	49
45. Չեմաղիկ, Ա.Թ. ԽՆԿՈՅԱՆ	51
46. Յե՛րբ ե լինում, «ԼՈՒՍԱՐՁԱԿ»	51
47. Սուտասանը	52
48. Մանուշակ * *	53
49. Արագիւ, ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ	54
50. Մայիս	55
51. Իոսիֆ Ստալին	56
52. Նոր տունը	58
53. Փեթակում	59
54. Մեղու, Ա.Թ. ԽՆԿՈՅԱՆ	60
55. Մեղուները, «ԴԱՍՏՆԿԵՐ»	61
56. Արագիւն ու գորտը, Ա.Թ. ԽՆԿՈՅԱՆ	62
57. Կարնան ամիսները, Ղ. ԱՂԱՅԱՆ	62
58. Սափառնակը	63
59. Շուտ և լավ	64
60. Վոզնին	65
61. Վոզնու շորերը	66
62. Հանելուկներ	67

63. Ինչո՞ւ համար ե պոչը	68
64. Արձագանք, «ԼՈՒՍԱՐՁԱԿ»	70
65. Փոքրիկ ձկնորսը *	71
66. Չորագիտում, ՀԱԿ. ՀԱԿՈՒՅԱՆ	72
67. Ընդհանուր գործ	73
68. Բամբակը	74
69. Կարմիր զկապը	75
70. Բամբակազտիչ գործարանում	76
71. Լենտեքստիլը, Ա.Թ. ԽՆԿՈՅԱՆ	77
72. Յերկու կոլանտեսական	78
73. Ճանճը	79
74. Արտուտիկ, ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ	79
75. Առաջին անգամ քաղաքում	80
76. Պիոներ Պավլիկ Մորոզովը	81
77. Պիոներներն ուղեւորին	82
78. Մանկական հրապարակ	83
79. Անճոռնի ճուռիկը, «ԴԱՍՏՆԿԵՐ»	84
80. Ճերմակը, ՀՄ. ՄԻՔՅԱՆ	86
81. Ռադիոն	88
82. Լողանանք	90
83. Հեռախոսը, ՍՏ. ՉՈՐՅԱՆ	91
84. Միշիկի «ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿԸ»	93
85. Ամռան ամիսները, Ղ. ԱՂԱՅԱՆ	94
86. Յե՛րբ ե լինում, «ԼՈՒՍԱՐՁԱԿ»	94
87. Չորս յեղանակ, «ԼՈՒՍԱՐՁԱԿ»	95
88. Բրիգադիր	98

Մասնոր. — Անստորագիր հոդվածները կազմողի ինքնուրույն, փոխադրած և թարգմանած հոդվածներն են:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

8-րդ եջում ներքեից 2-րդ առջի սկզբը ապօրինի և սոս. պետք է լինի տփ:
 88-րդ եջում ներքեից 11-րդ առջում մուլիկը բառի մեջ ք առը ապօրինի և շքե-
 ված: 95-րդ եջում նկարը զուրս և մնացել:

« Ազգային գրադարան



NL0249355

8672

ԳԻՆԵ 60 ՀԱՊ.
ԿԱՐՄԸ 20 ՀԱՊ.

56-11
ՍահՅ3

Ա. Արաբեյան
ԿՈՒՄԱԿԱՆԱԿԱՆ
ԿՈՒՄԱԿԱՆԱԿԱՆ

1 կլաս

Երևան, Հայաստան, 1935 թ.